5.	ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ԼԵԶՎԻ ՀԱՐՑԵՐԸ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ «ԵՒՐՈՊԱ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ

ՀՏԴ 80
DOI: 10.56246/18294480-2023.14-17

ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ
ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլփոստ՝ asoyan.60@mail.ru

Մխիթարյանների գործունեությունը արդյունավետ է եղել նաև լրագրության ոլորտում: Պարբերական ստեղծելու առաջին փորձը վերաբերում է 19-րդ դարի սկզբին: Լույս են ընծայում երկու պարբերական, սակայն հայ լրագրության պատմության մեջ վենետիկցիների մեծ ներդրումը կապվում է «Բազմավէպ» հանդեսի հրատարակման հետ: Վիեննայի Մխիթարյանների՝ լրագիր հրատարակելու առաջին փորձն ավարտվում է անհաջողությամբ, սակայն 1847թ.-ից սկսում է հրատարակվել «Եւրոպա» պարբերականը: Հոդվածի նպատակը «Եւրոպա» պարբերականում արծարծված այն հարցերի քննությունն է, որոնք առնչվում են լեզվական խնդիրների: Նշվում է, որ «Եւրոպա»-ն այդպիսի հարցերի անդրադարձել է առաջին շրջանում, իսկ երկրորդում նման նյութեր չեն հանդիպում:

«Եւրոպա»-ում հրապարակված նյութերը վերաբերում են տարբեր հարցերի: Ազգային լեզվին վերաբերող դիտարկումները հաճախ ներկայացվում են հայոց պատմականորեն ձևավորված վիճակի, դաստիարակության, ուսուցման, լեզվի նշանակության, պահպանման և զարգացման, գիտության խնդիրներին զուգահեռ: Գնահատվում են քերականական աշխատությունները, նորատիպ մատյանները, հին ձեռագրերը, սեպագիր արձանագրությունները, հայ մատենագրությունը և այլն: Իրենց հրապարակումներում Մխիթարյանները ցուցաբերում են հավասարակշռված դիրքորոշում՝ հաշվի առնելով

քննարկվող նյութի առանձնահատկությունը, բնույթը, հասարակական հնչեղությունը:

Բանալի բառեր՝ *«Եւրոպա», Վիեննայի Մխիթարյաններ, «Բազմավէպ», լեզվական խնդիրներ, կրթություն, ուսուցում, հայ մատենագրություն:*

Ներածություն:Մխիթարյանների գործունեությունը արդյունավետ է եղել նաև լրագրության ոլորտում: Պարբերական ստեղծելու առաջին փորձը վերաբերում է 19-րդ դարի սկզբին, երբ Վենետիկի Մխիթարյանները հրատարակեցին «Տարեգրութիւն»-ը, որը հայ պարբերական մամուլի պատմության մեջ երկրորդն է «Ազդարար»-ից հետո: Սակայն «Տարեգրութիւն»-ը երկար կյանք չունեցավ: 1803-20թթ. նրանք լույս են ընծայում «Եղանակ Բիւզանդեան» պարբերականը, սակայն հայ լրագրության պատմության մեջ վենետիկցիների մեծ ներդրումը կապվում է «Բազմավէպ» հանդեսի հրատարակման հետ: Վիեննայի Մխիթարյանների՝ պարբերական հրատարակելու առաջին փորձն ավարտվում է անհաջողությամբ. 1819թ.-ին փորձում են հրատարակել թերթ՝ «Ծանօթութիւնք վաճառագիտութեան» վերնագրով, «սակայն թերթը, չգտնելով քաջալերութիւն, դադրեցաւ առաջին թուով իսկ»[1]: 1847թ. «յորդորմամբ եւ քաջալերութեամբ Վսեմ. Յակոբ Չէլէպիի Տիզեանց, կը ձեռնարկուի շաբաթաթերթի մը՝ Եւրոպա անուն», որը այլևայլ նյութերի հետ պիտի հրատարակեր նաև գիտական-բանասիրական հոդվածներ: Առաջին շրջանում «Եւրոպա»-ն 1847-53թթ. լույս է տեսել «Շաբաթական լուրեր», իսկ 1854-57թթ.՝ «Լրագիր շաբաթական» ենթախորագրերով՝ առանց ուղղվածությունը փոխելու, այնուհետև՝ երկրորդ շրջանում՝ 1858-63թթ., կոչվել է «Օրագիր ընտանեկան»՝ վերածվելով երկշաբաթաթերթի, ավելի շատ տնտեսագիտական-ընտանեկան բնույթի նյութեր հրապարակելով, քան քաղաքական-բանասիրական՝ փորձելով այդպես գոհացնել «ընթերցողներու մեծագոյն թիւը»: Բայց, ըստ երևույթին, դա էլ չի օգնել: Ն. Ակինյանը գրում է. «Բայց տածուած յոյսն ի դերեւ ելաւ, եւ միաբանութիւնը ստիպուեցաւ առ ժամանակ մը դադրեցնել թերթը»[2]: Լրագիր ունենալու՝ Մխիթարյանների ձգտումը, ի վերջո, իրականանում է 1887թ., երբ ամսական պարբերականու-

---

[1] Ակինյան Ն., Ակնարկ մը....., Վիեննա, 1912, էջ 55:

[2] Նույն տեղում:

թյամբ սկսում է հրատարակվել «Հանդէս ամսօրեայ»-ն՝ ամենաերկարակյաց պարբերականներից մեկը հայ մամուլի պատմության մեջ:

Մեր նպատակը «Եւրոպա» պարբերականում արծարծված այն հարցերի քննությունն է, որոնք առնչվում են լեզվական խնդիրների: Նշենք, որ «Եւրոպա»-ն այդպիսի հարցերի անդրադարձել է առաջին շրջանում, իսկ երկրորդում նման նյութեր չեն հանդիպում:

«Եւրոպա»-յում հրապարակված նյութերը վերաբերում են տարբեր հարցերի: Ազգային լեզվին վերաբերող դիտարկումները հաճախ ներկայացվում են հայոց պատմականորեն ձևավորված վիճակի, դաստիարակության, ուսուցման, լեզվի նշանակության, պահպանման և զարգացման, գիտության խնդիրներին զուգահեռ: Ներկայացվում, գնահատվում են քերականական աշխատությունները, նորատիպ մատյանները, հին ձեռագրերը, սեպագիր արձանագրությունները, հայ մատենագրությունը և այլն: Իրենց հրապարակումներում Մխիթարյանները ցուցաբերում են հավասարակշռված դիրքորոշում՝ հաշվի առնելով քննարկվող նյութի առանձնահատկությունը, բնույթը, հասարակական հնչեղությունը:

Նյութի վերլուծությունը: Պարբերականի 1848թ. 14-րդ համարում «Ազգային տեղեկութիւն» ընդհանուր խորագրի տակ հրապարակվել է մի հոդված՝ «Հայերէն քերականութիւնները եւ առանձինն Չալըխեան Հ. Վրթանէս վարդապետին քերականութեան չորրորդ տպագրութիւնը» վերնագրով: Հոդվածը միայն Չալըխյանի քերականության կարևորության գնահատմանը չի վերաբերում: Այն կարելի է համարել հակիրճ տեսություն ընդհանրապես լեզուների, հայերենի զարգացման ու մշակման, հայերեն քերականությունների ստեղծման և նրանց անհրաժեշտության մասին: 19-րդ դարը համարվել է ազգային լեզուների մշակման և լեզվաբանության զարգացման դար: Բոլոր մեծ ու փոքր ազգերը զբաղված են իրենց լեզուների մշակման և «ծաղկեցընելու» գործով: Այս գործընթացում նշվում է երկու կարևոր հանգամանք. նախ՝ «Ամէն աս ազգերը ազգային ժողովքներուն մէջ իրենց մայրենի լեզուն խօսելու, գրուածներու մէջ մայրենի լեզունին գործածելու, լեզուներնուն մէջ մտած օտար բառերն ու ոճերը դուրս հանելու համար մեծ նախանձաւորութիւն մը կը ցուցընեն», և ապա՝ «Թագաւորներն ու իշխանները գրագէտներուն ձեռք կը բռնեն. Լեզուին յառաջադիմութեան օգնողներուն առատ վարձք ու պարգեւ կու տան»[3]: Մեջբերումները փաստում են մայրենի լեզվի

[3] «Եւրոպա», թ. 14, 1848:

նկատմամբ ազգերի ցուցաբերած ընդգծված ուշադրության մասին, որը կարելի է բացատրել նրանց մոտ ազգային ինքնագիտակցության, ինքնապահպանման և միասնականության գաղափարների հասունացմամբ, որն արտահայտվում էր նաև լեզվի արդի վիճակի և ապագա զարգացման ուղիների վերաբերյալ խնդիրների արծարծմամբ[4]: Շատ կարևոր է այն վկայությունը, որ լեզվամշակման գործընթացը, ըստ էության, համազգային միասնական շարժում էր. «գրագետները» մաքրում, կանոնարկում էին լեզուն, իսկ «թագավորներն ու իշխանները» նպաստում էին դրան՝ «յառաջադիմութեան օգնողներուն առատ վարձք ու պարգեւ» տալով:

Հոդվածագիրը այնուհետև անդրադառնում է հայոց լեզվի խնդիրներին՝ նշելով, որ «մեր ազգն ալ հիմա ամէն ժամանակներէն աւելի իր լեզուն մշակելու, կատարելագործելու մեծ փոյթ կը տանի» այնպես, որ այլ ազգերը նույնիսկ «չէ թէ միայն կը զարմանան, հապա կնախանձին ալ»: Պետք է ասել, որ, իսկապես, 19-րդ դարի կեսերին լեզվի հարցերը ամենաշատ քննարկվողներն էին հայ մտավորականության շրջանում, իսկ հարցերի շրջանակը լայն էր՝ «հին» ու «նոր» լեզուների գիտական ուսումնասիրությունից մինչև լեզվով պայմանավորված ազգային տարատեսակ խնդիրներ: Հենց այս մթնոլորտում ծնվեց «գրապայքար» կոչված բանավեճը, որի ժամանակ բավականին ակտիվ էր հրապարակագրությունը, պարբերական մամուլում հաճախ էին լույս տեսնում հայոց ազգային լեզվի պահպանման և ուսուցման մասին՝ լեզուն դիտելով ազգային գոյության հիմնասյուներից ամենակարևորը[5]:

Դրական է համարվում գրաբարի հետ նաև աշխարհաբարի «յառաջացումը»(=զարգացումը), որի արդյունքում «գիտնականներուն ջանքովը շատ ուսումնական գաղափարներու բառեր որոշուեցան, ու ետեւէ ետեւ ալ որոշուելու ու գտնուելու վրայ են»[6]: Ասել է թե հընթացս լուծվում էին բառապաշարի, մասնավորապես տերմինաբանության հարցերը: Լեզվի մշակման, զարգացման գործընթացի արդյունավետությալն ցուցիչը քերականությունների շատանալն է, որոնց մասին ուզում է խոսել հեղինակը, սակայն ավելի համոզիչ լինելու համար փորձում է գնահատել «մինչեւ հիմա հրատարակուած

---

[4] Տե՛ս Աճեմյան Վ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Երևան, 1971, էջ 110:

[5] Պարբերական մամուլում ազգային լեզվի խնդիրներին վերաբերող հրապարակումների ուսումնասիրությունն ու վերլուծությունը մի առանձին նյութ է: Այստեղ ուղղակի նշենք, որ այդ շրջանում լույս տեսնող բոլոր թերթերում հաճախակի էին նման հրապարակումները:

[6] «Եւրոպա», թ. 14, 1848:

հայերէն լեզուի քերականութիւնները», որոնք լեզուն սովորելու գլխավոր միջոցներն են: Նշելով հին ու նոր մի շարք քերականների՝ հների քերականությունները համարում է «յոյն» քերականի /Թրակացու/ մեկնություններ, իսկ նորերինը «կարգաւորեալ ու հիմնական բան մը չէր»: Առաջին «հայերէն կարգաւորել քերականութիւն շինողը» համարված է Մխիթար Սեբաստացին, որը 1730թ. հրատարակում է գրաբարի քերականությունը: Այնուամենայնիվ, հոդվածագիրը փաստում է նաև մի կարևոր հանգամանք՝ այս անգամ կապված գրաբարի քերականական համակարգի հետ: 18-րդ դարում խնդիրներ կային ոչ միայն լեզվի բառապաշարի, այլև քերականական համակարգի հետ կապված: Վերջինիս վրա նկատելիորեն մեծ էր լատիներենի ազդեցությունը: Առաջիններից մեկը Սեբաստացին էր, որ թեև զգուշորեն, բայց արտահայտվեց գրաբարը լատինաբանություններից մաքրելու անհրաժեշտության մասին: Զգուշավորությունը Սեբաստացու բնավորության կարևոր հատկանիշներից էր. Ժամանակը ազատ գործելու հնարավորություն չէր տալիս՝ հակառակորդները շատ էին, և նրանց չգրգռելու համար քերականության մեջ «իր ժամանակին խանգարմունքներէն քանի մը բան չփոխեց»: Դրանով հանդերձ շատ կարևոր էր, որ Սեբաստացին իր քերականությամբ ոչ միայն լեզուն մաքրելու, մշակելու և կանոնակարգելու օրինակ ցույց տվեց, այլև նպաստեց լատինաբանությունների հետագա մուտքը բացառելուն[7]: Այս տեսակետից որոշակի դեր է խաղացել նաև Պ. Դպիրի քերականությունը (1736), սակայն, ըստ հոդվածագրի, լեզուն վերջին «երկու երեք դարերուն մէջ կրած ապականութեներէն» մաքրելու առաջնությունը վերապահված էր Մխիթարյաններին, մասնավորապես Միքայել Չամչյանին, որի քերականությունն (1779) արդեն զերծ էր լատինաբանություններից: Գնահատվում են նաև Գ.Ավետիքյանի, Մեսրոպ քահանա Հարությունյանի, Միք. Սալլանթյանի քերականությունները: Սրանց դեպքում արվում է մի կարևոր դիտարկում. դրանք չէին կարող գործածվել վարժարաններում լեզու ուսուցանելու նպատակով: Այս բացը լրացնում է Վրթանես Չալըխյանն իր նոր քերականությամբ, որը թե՛ ծավալով, թե՛ բովանդակությամբ բավարարում էր կրթական չափանիշներին, ուստի դարձավ փնտրված դասագիրք դպրոցների համար և վերահրատարակվեց մի քանի անգամ:

Անդրադարձ է կատարվում նաև օտար լեզուների քերականություններին:

---

[7] Նույն տեղում:

Եթե բովանդակային ընդհանրացումներ կատարենք, ապա Վրթանես Չալըխյանի քերականության ներկայացմանը զուգընթաց քննվում են լեզվի վիճակին, նրա մաքրման ու մշակման, ուսուցման խնդիրներին վերաբերող հարցեր, որոնք առավել կամ պակաս խորությամբ բավականին ակտիվորեն արծարծվում էին ժամանակի պարբերական մամուլում:

1849թ. մի քանի համարներում տպագրվել է մի հոդված՝ «Ազգային լեզուն ազգային յառաջադիմութեան գլխավոր միջոցն է» վերնագրով: Լեզու-ազգ հարաբերության հարցերը խիստ արդիական հնչեղություն ունեին 19-րդ դարում, և միայն «Եւրոպա»-յում չէ, որ արծարծվում էին նմանատիպ հարցեր: Ազգահավաքության, ազգապահպանության, ազգային մշակույթի զարգացման խնդիրները շատ հաճախ իրավացիորեն սերտորեն կապվում էին լեզվական իրավիճակի հետ, և առավել ցայտունորեն երևան էին եկել 19-րդ դարի առաջին կեսին:

Ազգային լեզուն սովորելը յուրաքանչյուրի **«բնական պարտքն է»,** ընդ որում դա չպետք է պայմանավորված լինի ազգի վիճակով: Արվում է սովորական մի հարցադրում, որին տրվում է միանգամայն սթափ ու սպասելի պատասխան: Մեջբերենք. «...մտածենք որ ազգի մը գոյութիւնը պահողն ի՞նչ է: - Մի միայն իր լեզուն»[8]: Չնայած պատմության ընթացքում շատ բաներ են փոխվել՝ կրոն, սովորույթներ, ավանդույթներ, որոնք փոխարինվել են նորերով, սակայն մեր ազգայնությունը պահել ենք և չենք ձուլվել այլ ազգերի, որովհետև «Կրօնը, կրօնական ձեւերն ու կարգերը, սովորութիւնները, ախորժակները փոխուելէն ետքն ալ ազգայնութիւնը դեռ կրնայ մնալ, բաւական որ լեզուն մնայ. բայց լեզուն կորսուելէն վերջը՝ ազգին բանը լմընցաւ, ջնջուեցաւ, անյիշատակ եղաւ»[9]: Ազգերն այլ ազգերի ազդեցություններից պաշտպանող և տարբերող գլխավոր հատկանիշը լեզուն է, ընդ որում նշանակություն չունի ազգի մեծ ու փոքր լինելը, որովհետև նախնիների ավանդած «ազգայնությունը» լեզվի միջոցով պահելը **պարտք է, ազնվացնելը՝ փառք**: Այնուամենայնիվ, ասվածն ինչքան տրամաբանական, այնքան էլ մնում է իբրև վերացական դատողություն: Հասարակական միջավայրն իրականում ազգային խնդիրների, լեզվի դերի ու նշանակության վերաբերյալ բավարար գիտակցական վերաբերմունք չէր ցուցաբերում: **Տեսականորեն** ընդունելով լեզուն սովորելու, զարգացնելու գաղափարը՝ **գործնականում**

---

[8] Նույն տեղում:

[9] Նույն տեղում:

դա համարում են ժամանակի կորուստ: Դրա փոխարեն կարելի է որևէ շահաբեր բան սովորել: Ահա, իրավիճակից ելնելով՝ հոդվածագիրը փորձում է ցույց տալ, որ լեզուն սովորելը ազգի վիճակը բարելավելու համար և՛ պետք է, և՛ օգտակար, որովհետև «Ազգային ու ազգովին (ազգայնութիւնը պահելով ու բոլոր ազգաւ) յառաջադիմութիւն ընել կուզենք նէ, առանց մեր հայերէն ազգային լեզուին չենք կրնար գլուխ հանել»[10]:

Ազգային «յառաջադիմությունը» (զարգացումը) պայմանավորված չէ նյութական արժեքներով, դրանք կարող են տարատեսակ դիպվածներից ուղղակի ոչնչանալ, այլ մտավոր հաստությամբ՝ գիտությամբ ու կրթությամբ, այդ դեպքում միայն իրապես կարող են ստեղծվել ազգային անկապտելի հոգևոր արժեքներ, որոնք նյութական հարստությունների անսպառ աղբյուր կարող են հանդիսանալ: Գիտության զարգացումը համակարգված և շարունակական բնույթ պետք է կրի՝ ազգային զարգացումն ապահովելու նպատակով: Գիտությունների յուրացումը հոդվածում արդարացիորեն կապվում է «կարգաւորեալ լեզու» ունենալու հետ: Անկատար լեզուն չի կարող լինել գիտությունների, գաղափարների լիարժեք արտահայտիչ: Պետք է ասել, որ այս տեսակետը 19-րդ դարի առաջին կեսին շատ էր շրջանառվում և աշխարհաբար լուրջ հրապարակումների բացակայությունը մտավորականությունը բացատրում էր հենց աշխարհաբարի անկատարությամբ (օտարաբանություններով լեցուն բառապաշար, չկանոնարկված քերականական համակարգ): Առաջարկվում է հետևյալ լուծումը. «Սորվիլ ուզող մարդը գիտութեան վրայ տիրելէն յառաջ լեզուին վրայ տիրած ըլլալու է»: Այնուամենայնիվ, պարզվում է, որ լեզուն «աղեկ հասկընալը» դեռևս բավարար պայման չէ, մարդը մանկուց պետք է նույն՝ ընտանեկան լեզվի մեջ մեծացած ու կրթություն ստացած լինի, և դա կլինի նաև մարդու «մտքի լեզուն»: Օտար լեզվի թեկուզև գերազանց իմացությունը իր արդյունավետությամբ չի կարող հավասարվել մայրենի լեզվին: Փաստորեն դրվում է լեզվամտածողության խնդիրը, ուստի բնական է, որ հայոց համար միմիայն հայերենը կարող է լինել կրթության լեզու, քանի որ նախ՝ բոլոր գավառներում այն տարածված է հայոց մեջ և ապա՝ հայերենը բավարար կատարելություն ունի՝ կրթական գործը կազմակերպելու համար: Այլ լեզուների դեպքում նշված հանգամանքներից որևէ մեկի բացակայության հետևանքով ազգային լուսավորական առաջադիմությունը «չի յաջողիր»:

---

[10] Նույն տեղում;

Մյուս խնդիրը, որ շոշափվում է հոդվածում, թուրքերենի (տաճկերենի) հարցն է: Թուրքերենի հիմնավոր իմացությունը պարտադիր է թեկուզև այն պարզ պատճառով, որ Տաճկաստանը արևմտահայության հայրենիքն է և օսմանյան կայսրության բարի կամեցողությամբ է, որ թույլ է տրվել ազգային դպրոցներ ունենալ և ազատորեն ուսուցանել հայոց լեզուն: Ըստ երևույթին այս դիտարկումը ժամանակին հարմար զգուշավոր քաղաքականության դրսևորում է: Բոլոր դեպքերում ինչպես այլ լեզուների, այնպես էլ տաճկերեն սովորելու հիմքը պետք է հայերենը լինի հայ մարդու համար, հակառակը չի կարող լինել: Լեզուների իմացության հանգամանքը քննվում է լայն ըմբռնումով: Օտար լեզուների տիրապետող անհատների պակաս հայոց մեջ չի զգացվել, սակայն եթե գիտությունը, լուսավորությունը, կրթությունը լինեն միայն մի քանի անհատների սեփականությունը, իսկ ազգի ընդհանրությունը՝ զերծ դրանից, ապա ազգը «գիտնական ազգ չըսուիր»: Զարգացման պահանջը կարող է ենթադրել այլոց լեզուներին և սովորություններին դիմելու անհրաժեշտություն, սակայն դրան մշտապես ապավինելը կարող է կործանարար լինել, տանել ուծացման, մի բան, որ հենց մեր պատմության դառը փորձն է հուշում: Եզրակացությունը մեկն է. առաջադիմությունը միայն ազգային լեզվով է հնարավոր իրականացնել: Ազգային լեզուն բանալի է, որով կարելի է հասնել հաջողության:

Լեզուն սովորելն ինքնանպատակ չպետք է լինի: Նախևառաջ գիտունները պետք է ապահովեն գիտական և մշակութային արժեքների գրային տարբերակների գոյությունը, ապա գրել-կարդալ իմացողների շատանալը կարող է նաև տնտեսական որոշակի շահ ապահովել (նույնիսկ հաշվարկ է արվում թերթերի գների հետ կապված), ազգային լեզվի տարածումը դրական ազդեցություն կարող է ունենալ տպագրության, կազմարարության, թղթագործության, գրավաճառության ոլորտների վրա, և վերջին հաշվով լեզվի գործածությունը հենց լեզվի զարգացմանը կնպաստի, իսկ յուրաքանչյուր անհատ իր մասնակցությունը կբերի լեզվի հաստատմանը, հղկմանը, իսկ դա էլ իր հերթին նշանակալիորեն կմեծացնի լիարժեք գրավոր ու բանավոր խոսքի և հաղորդակցման հնարավորությունները: Ազգային լեզվի միասնական ու ընդհանուր համակարգի գոյությունը կարող է համախմբել «բովանդակ ազգին»: Ներկայացնելով հայերենի վիճակը տարբեր տարածաշրջաններում (Լեհաստան, Մաճառստան, Ռուսաստան, Պարսկաստան, Հնդկաստան, Կ.Պոլիս)՝ կարծիք է հայտնվում, որ միասնական լեզվի բացակայությունը կարող է խորթություն մտցնել հայոց տարբեր հատվածների

միջև: Իբրև օրինակ է բերվում սլավոնական ժողովուրդների ազգային և լեզվական վիճակը: Ազգային լեզուն նաև ազգային ոգու սնուցիչն է, իսկ դա կարող է մարդուն մղել ազգօգուտ գործունեության: Ազգային լեզուն յուրացնելը, նրա կատարյալ իմացությունը կարող են բացել ազգային հանճարը, ձիրքերն ու կարողությունները:

Այսպիսով, հոդվածագրի մտահոգությունը կապված է հայերենի ուսուցման խնդիրների հետ: Դժվարությունների հաղթահարումը, տարբեր ոկրներում հաստատված հայերի համար միասնական հայերենի ուսուցումը ոչ միայն կհամախմբի հայությանը, այլև կնպաստի գիտությունների զարգացմանը: Սակայն դրան հասնելու համար պետք էր ջանք չխնայել և պայմաններ ստեղծել կրթական գործի կազմակերպման համար:

Լեզվի մասին շատ հարցեր են քննվում նաև պարբերականի 1852թ. 6-րդ համարում տպագրված «Խորհրդածութիւնք ազգային լեզուի վրայ» հոդվածում: Լեզվի կանոնավորումը նշանակում է կարգավորել մտածողությունը, որովհետև լեզուն «մտքի յստակ հայելին է», ապահովել ազգի զարգացման առաջընթացը և դառնալ գիտությունների ծավալման հիմք: Առավել օգտակար ու կատարյալ գործառույթներ կարող է իրականացնել լեզուն, եթե մշակվի և իր «բնական շէնքին վրայ արուեստական օգնութիւններն ալ հետզհետէ գան միանան»: Թերևս խիստ արդիական է այն դիտարկումը, որ մեծ ու փոքր շատ ազգեր լեզվի զարգացմամբ են պայմանավորել իրենց ներկան ու ապագան, և դա ոչ թե «ընդունայն ազգասիրութենէ կամ ազգապարծութենէ յառաջ եկած բան էր», այլ բանական մտքի արտահայտություն: Մի շարք ազգերի օրինակով (ճապոնացիներ, պարսիկներ, հույներ, եգիպտացիներ) ցույց է տրվում, թե ինչքան եռանդ է գործադրվել, ինչքան շատ վարժարաններ են բացվել լեզուն մշակելու և զարգացնելու ուղղությամբ, ինչքան ջանքեր են ներդրվել «լեզուին միութեան, հարստութեան ու զարդարանքին համար»: Եվրոպական նոր ազգերն այդ առումով ավելի մեծ հաջողությունների են հասել՝ ավելի շատ միջոցներ կիրառելով: Արվում է ևս մի շատ կարևոր դիտարկում Ֆրանսիայի (Գաղղիա) օրինակով, որը ազգային լեզվի մշակման ուղղությամբ մեծ աշխատանքներ է տարել: Բանն այն է, որ լեզվի մշակման ու զարգացման խնդիրները գտնվել են պետության և ամբողջ հասարակության ուշադրության կենտրոնում, և ինչպես գրում է հոդվածագիրը, «Իր թագաւորները, իշխաններն ու բոլոր ազգը շատ մեծ փոյթ

տարին իենց լեզուին՝ ո՛չ ծախքի, ո՛չ ալ աշխատանքի խնայելով»[11], այնպես, որ այլ երկրներում դարձավ պալատական, դեսպանական ու ազնվականության լեզու իր կանոնավոր բնույթի, հարուստ բառապաշարի շնորհիվ: Նույն ճանապարհն անցնում են նաև մաճառները(հունգարները), որոնք նույնիսկ վճարել են յուրաքանչյուր հաջողված նորաստեղծ բառի համար:

Այլ ժողովուրդների՝ լեզվի նկատմամբ դրսևորած վերաբերմունքի փոքրիկ տեսությունից հետո անցում է կատարվում հայոց լեզվին՝ փորձելով ներկայացնել լեզվական խնդիրների լուծման ուղղությամբ կատարված աշխատանքները «ի սկզբանէ մինչեւ հիմակ»: Չնայած փաստերը քիչ են, սակայն բավարար են որոշակի գաղափար կազմելու համար: Առաջին լուսավոր կետն այդ առումով Պատմահոր հիշատակած Հայկյան Արամն է, նրա իսկապես ազգանպաստ գործունեությունը, որ «երկրին բնակիչներուն կը հրամայէ, որ հայերէն լեզու սորվին ու խօսին», ասել է թե հայերեն պիտի սովորեին և խոսեին ոչ միայն հայերը, այլև այլազգիները: Սա հոդվածագրի կողմից որակվում է որպես պետական-կառավարական մոտեցում, հայերենն էլ բնականաբար կարող էր «Կառավարութեան լեզու ըլլալ»: Ստրաբոնի վկայությունն է հիշվում, թե Հայքը միալեզու էր՝ բազմազգ լինելով հանդերձ: Հայոց լեզուն բարձր զարգացման է հասել քրիստոնեության, մասնավորապես սուրբ թարգմանիչների ժամանակաշրջանում, երբ հոգևորները և աշխարհիկ իշխանները միասնաբար ջանացին դպրոցներ բացել, գրքեր թարգմանել, գրքեր գրել ու առաջարկել, սակայն այդ «ոսկեղէն ժամանակը» կարճատև էր, իսկ հետագայում այդպիսի իրավիճակները դիպվածային դարձան: Պատճառները հայոց քաղաքական վիճակն էր և այլոց գերիշխանությունը ինչպես ընդհանրապես ազգի, այնպես լեզվի վրա, ընդ որում «ամենէն կոշտ ու նշանաւոր այլակերպութիւնը…լատին լեզուի կաղապարին վրայ բռնի ձուլել ու ձեւել» ցանկանալն էր: Անցյալում լեզվի անմխիթար վիճակի վերաբերյալ մտահոգություններն ունեին իրական հիմքեր. հայերենի անկազմակերպ վիճակը, տաճկերենի գերիշխող դիրքը, լեզվի իմացությունը միայն եկեղեցականներին վերագրելը և այլն: Պատմական փաստերի վկայակոչմամբ քննվում են պետության ներսում լեզուների փոխհարաբերությունների հարցերը՝ նկատի ունենալով «տիրող ու կառաւարող ցեղին լեզուի» և «հպատակեալ ազգին լեզուի» հնարավորություններն ըստ պատմական տարբեր իրավիճակների: Այնուամենայնիվ ժամանակի ընթացքում

[11] «Եւրոպա», 6, 1852:

շատ բան է փոխվել, և «հիմակուան (խոսքը 19-րդ դարի մասին է - Ա. Թ.) օսմանեան ազնուացեալ կառավարութիւնն ալ... դպրոցներու հաստատութիւնն ու ազգային լեզուի ուսումն ալ տէրութեան մէջ ամէն տեղ բոլորովին ազատ թող տրուեցաւ»: Իհարկե, ասվածը համապատասխանում է իրականությանը, սակայն կարծում ենք, որ օսմանյան կառավարության նման «ազնվական» վարքագիծը պայմանավորված էր ոչ թե կայսրությունում ապրող ազգային փոքրամասնությունների նկատմամբ բարի կամեցողությամբ, այլ առկա պայթյունավտանգ իրավիճակով, հասարակական – քաղաքական շարժումների զարգացմամբ:

Ըստ հոդվածագրի՝ լեզվի նկատմամբ հասարակության մի նշանակալի հատվածի վերաբերմունքը որոշվում էր շահաբեր լինել-չլինելու տրամաբանությամբ, մինչդեռ «իրենց ազգային լեզուն անշահաբեր կարծողները պէտք է անտարակոյս շահելու բարձրագոյն կերպը չգիտցող մարդիկ համարիլ»[12]: Միտքը շարժման մեջ դնելու լավագույն միջոցը «հասկնալով կարդալն է», մինչդեռ նրանք, ովքեր տարբեր հնարքների ու խաբեությունների գործադրությամբ շահելու մեջ հաջողակ են, բայց հաղորդակից չեն ազգային լեզվին, միևնույն է, տգետ են, իսկ գրավոր լեզվին տիրապետողները կրկնակի հաջողությունների կարող են հասնել:

Ազգային լեզուն չիմանալու մյուս պատճառը դպրատների վիճակն է, հասարակական շատ շերտերի համար անհասանելի էր ծախսերի պատճառով, որի հետևանքով շատերն իրենց որդիներին տալիս են արհեստի: Վարժարանն ավարտողն իր ազգային լեզվին տիրապետել չի կարող, եթե միայն առանց հասկանալու կարդալ գիտի և առանց շարադրելու գրել գիտի:

Ազգային լեզուն չսովորելու երրորդ պատճառը իբր հայերենի կոշտ հնչողությունն է կամ «դրսեցիներու» լեզու կարծելը, որը «աւելի ռամկական ըմբռնումներէ յառաջ եկած» է և լեզուն չսովորելուց ու չգիտենալուց: Իհարկե, ընդհանրապես լեզուն նման չափանիշներով գնահատելը տգիտության ցուցիչ է. լեզվի արժանիքը ականջահաճո հնչելը չէ, այլ «մտքի գաղափարներուն յայտարար ու հաղորդիչ» լինելը: Ինչ վերաբերում է լեզվի հնչողությանը, ապա այն չեն կարող միանման բարեհունչ լինել, եթե կան տարածական և հասարակական զանազան տարբերակներ, գրագետ ու անուս մարդիկ: Բնական է, որ վերջիններս չեն կարող լեզվի հարցերում ճիշտ կողմնորոշվել, մասնավորապես գերադասում, են տաճկերենը գործածել, քան

[12] «Եւրոպա», 22, 1852:

հայերենը, նույնիսկ գերադասում են մեր եկեղեցական ծեսերը թուրքերենով կատարել: Այս Երևույթը բավականին տարածված էր արևմտահայոց մեջ: Նշենք, որ դեռևս 18-րդ դարի սկզբին այս վիճակը մտահոգել էր Մ. Սեբաստացուն, որը կազմում և հրատարակում է արևմտահայերենի մի փոքրիկ ձեռնարկ («Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց», Վենետիկ, 1727, հայերեն ընդարձակ տարբերակը մնացել է անտիպ) արևմտահայերի համար, բայց մտահոգիչն այն էր, որ ձեռնարկը գրված էր հայատառ թուրքերենով: Այս փաստը վկայում է, որ արևմտահայությունն ավելի լավ էր տիրապետում թուրքերենին, քան հայերենին[13]: Այս փաստը վկայակոչում է նաև Հր. Աճառյանը, որը, նշելով թուրքերենի ահռելի ազդեցությունը հայերենի վրա բոլոր գաղթօջախներում, գրում է, որ հայերը, կորցրած իրենց մայրենի լեզուն, ամենուր խոսում են թուրքերեն, «Եկեղեցում անգամ, ուր արարողությունը կատարվում էր գրաբար, քարոզ և ծանուցում կատարվում են թուրքերեն լեզվով»[14]: Թուրքերենի արմատակալումը հայերենում խիստ նկատելի էր նույնիսկ 19-րդ դարի առաջին կեսին: Ահա այս փաստն է արձանագրում նաև հոդվածի հեղինակը: Քամահրանքը ազգային լեզվի նկատմամբ մեծ չափերի էր հասել, մի բան, որ այլ լեզուների պարագայում (ֆրանսերեն, հունարեն) պարզապես բացառվում էր: Արհամարհանքը սեփական լեզվի նկատմամբ ոչ միայն չէր նպաստում նրա զարգացմանը, այլև դառնում էր խոչընդոտ՝ «խափանիչ»: Լեզուն ժամանակի մեջ փոխվելու, զարգանալու, մաքրվելու հակում ունի, որին պետք է նպաստել այն գործածելով, խնամքով վերաբերվելով, և այդ դեպքում այն կդառնա գեղեցիկ ու բարեհունչ:

Հոդվածում մայրենի լեզուն արհամահելու թվարկվող երեք պատճառներին (սովորելու պատշաճությունը և բարոյական օգուտները չտեսնելը, նյութապես շահաբեր չլիները, արտաքին արտասանական անհարմարությունները) ավելացվում է նաև չորրորդ դժվարությունը՝ լեզվի ներքին կառուցվածքի մշակվածության աստիճանը, մտքեր արտահայտելու սահմանափակ հնարավորությունները, գրքերի քանակը, հանգամանք, որը վանում է մայրենի լեզուն սովորելու ցանկությունը: Համեմատությունը այլ լեզուների հետ բացահայտում է հայերենի առավելությունները մի շարք լեզուների նկատ-

---

[13] Մանրամասն տե՛ս Թ.Ասոյան, Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Երևան, 2001:

[14] Հր.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հտ. 2, Երևան, 1951, էջ 261:

մամբ, բայց նաև շատ են պակասությունները, որոնք չընդունելը «գրեթէ արեւուն գոյութիւնն ուրանալու պէս բան մըն է»: Հոդվածագիրը փորձում է ցույց տալ, որ եվրոպական լեզուները 3-4 դար առաջ անկերպարան վիճակում էին, աղքատ ու անզարդ, «ընդհանրապես մերկ, չոր ու անհամ ոճ»-ով, բայց դա չի խանգարել, որ լեզվակիրները չմշակեն, չհաստատեն իրենց լեզուն, հոգ չտանեն նրա մաքրության մասին, մինչդեռ հայերենի պարագայում հայերի մոտեցումն այլ է: Եթե եվրոպական լեզուները օգտվեցին լատիներենից, հունարենից, այլ օտար լեզուներից վերցրին բառեր, ոճեր ու ձևեր, «ընտանի ըսուածքներ», որոնք հեղինակն անվանում է «պատահական կատարելություններ», ապա հայերենը «ոչ երբեք այնպիսի խեղճութեան եւ անշքութեան մէջ է, ոչ երբեք այնչափ շինծու օգնութիւններու եւ այնչափ օտար լեզուաց խառնուրդներու հարկաւորութիւն ունի»: Գրաբարի, մեծ մասամբ նաև աշխարհաբարի հնարավորությունները թույլ են տալիս արտահայտելու ցանկացած միտք ու գաղափար: Նշենք, որ գրաբարին դիմելու պատճառը հաճախ բացատրվում էր աշխարհաբարի անկազմակերպ վիճակով, սակայն 19-րդ դարի կեսերին աշխարհաբարն արդեն բավականին կանոնավորված էր և գնալով ընդարձակում էր իր կիրառության ոլորտները, սակայն դեռևս բառապաշարի թարմացման և ուսումնական գրականության ստեղծման անհրաժեշտություն էր զգացվում: Ըստ հոդվածագրի՝ լեզվի վիճակը կարելի է բարելավել, եթե վարժարաններում լեզվի դասերը կարգավորված և գործնական լինեն, ներդրումներ արվեն, լեզուն ուսումնասիրվի, ուսուցման լեզուն հայերենը լինի և այլն: Նշված միջոցները պետք է ավելի զարգացնեին լեզուն: Պետք է ասել, որ աշխարհաբարը 19-րդ դարի կեսերին բավականին հղկված և հարստացած վիճակում էր գտնվում: Այս փաստն է հաստատում նաև հոդվածի հեղինակը:

Այս հոդվածը գրված է մեր ազգային լեզվի, գիտությունների զարգացման, դպրոցներում ուսուցման գործընթացի կարգավորման մտահոգությամբ: Փորձ է արվում եվրոպական լեզուների համեմատությամբ գնահատել հայերենի վիճակը, ժողովրդի մեջ արմատավորել սեր, հոգատարություն և ուշադրություն մայրենի լեզվի ու կրթության նկատմամբ: Միաժամանակ որոշ տեղեկություններ են տրվում հայերենի անցյալ ու ներկա վիճակների, կրթության նկատմամբ մարդկանց դրսևորած վերաբերմունքի մասին:

Ազգի կրթական վիճակն ու լեզուն սերտորեն կապված են նրա պատմության հետ. կա՛մ բարձրանում ու պայծառանում է, կա՛մ իջնում ու կործանվում՝ կապված պատմական կոնկրետ իրավիճակների հետ: Այս տեսակետն

է արտահայտված «ԺԴ-ԺԸ դարու հայերենի վիճակը» հոդվածում: Գրաբարը, որ դասական լեզուների շարքը կարող էր դասվել, ժամանակի ընթացքում «օր օրուան վրայ աւրուեցաւ» և կորցրեց ոսկեդարյան շքեղությունը: Ըստ հոդվածագրի՝ լեզուների այդ «խանգարումները» երկու կերպ կարող են լինել՝ բնական և արվեստական (=արհեստական): Հոդվածում քննվում են նախ «արուեստական խանգարումները», որոնք կապվում են արտալեզվական միջամտությունների հետ: հայտնի է, որ 14-րդ դարից ստեղծված գրականությունը լեզվական առումով այնքան էր այլակերպվել, որ «ոչ մէկ լեզու մը ան աստիճանի ապականութիւն ու աւեր կրած է»: Եվ դա կապվում է կաթոլիկ միսիոներների գործունեության հետ: Լատին-հայ միաբանությունը, մտածելով, թե հայերենը անկատար է լատիներենի համեմատությամբ, փորձեցին հայերենի «անկատարություններն ու պակասությունները» վերացնել՝ լատիներենի հետ նույնացնելով: Լատինաբանությունները հայերենում հաստատվեցին համապատասխան քերականական կանոններով, դրա հետևանքով, ինչպես գրում է հեղինակը, ձևավորվեց «լատին-հայ լեզու մը, որ թէպէտ ըստ արտաքին թկերպարանացը հայերէն, բայց լատիներէնի կաղապարով ձուլեալ զանգուած մըն էր»: Այս հայերենն էր, որ տարածվեց ամենուր՝ դպրոցներ, գրականություն, գրվեցին քերականություններ: Հոդվածում բերվում են հայերենի վրա լատիներենի «պատվաստման» մի շարք օրինակներ՝ նշելով, «որ չէ թէ հին հայերէնի շխնուածքին վրայ օտար ճարտարապետութիւն մը բանեցուեր է, այլ լեզուին աւերակներուն վրայ օտար զարդերով նոր ճարտարապետութեամբ շէնքեր կառուցուեր են»[15]: Այս դիտարկման մեջ ուղղակի ակնարկ կա նաև ոսկեդարյան գրաբարի փոխակերպվելու վերաբերյալ, այս հանգամանքին խիստ բացասաբար է վերաբերվում հոդվածագիրը: «Նոր հայերենը» հեղինակն անվանում է խուժուդուժ ու խժալուր: Հիշվում է նաև հունարենի ազդեցության մասին:

«Բնական խանգարումը» հեղինակը կապում է լեզվի զարգացման ընթացքի հետ՝ նշելով գրքեր, որոնք գրված են «աշխարհաբառ ոճով» և զերծ լատինաբանություններից, բայց այդպիսի գրքերի քանակը շատ քիչ է: Լեզվի՝ գրաբարից հեռանալը համարվում է աղավաղում: Հեղինակը 14-18-րդ դարերում հայերենի կրած այդ երկու «խանգարումները» շտկելու գործընթացը իրավացիորեն կապում է Մ. Սեբաստացու և նրա աշակերտների գործունեության հետ:

---

[15] «Եւրոպա», 4, 1849:

«Եւրոպա» պարբերականում հրապարակվել են նյութեր՝ նվիրված հայագիտության տարբեր հարցերի՝ հայոց մատենագրության պատմություն, վիմագիր արձանագրություններ, նորատիպ մատյաններ, լեզվական առանձին իրողություններ և այլն:

Եզրակացություն: «Եւրոպա» պարբերականում քննվում են այնպիսի հարցեր՝ կապված մեր ազգային լեզվի հետ, որոնք 19-րդ դարում մեծ նշանակություն և հասարակական ինչեղություն ունեին: Դրանք վերաբերում են հայոց լեզվի պատմությանը, նրա մաքրման, մշակման, հարստացման և կանոնարկման խնդիրներին, ուսուցման գործընթացին, ազգային լեզվի նկատմամբ հասարակության կողմից դրսևորած անտարբերությանը՝ մեծ մասամբ դա պայմանավորելով նաև հայ ժողովրդի ցրվածությամբ և այլոց քաղաքական գերիշխանության տակ գտնվելու հանգամանքով: Շատ դեպքերում դիտարկումները կատարվում և անհրաժեշտաբար հիմնավորվում են համեմատական վերլուծությունների միջոցով: Արվում են ողջամիտ և իրատեսական առաջարկություններ՝ ազգային լեզուն սովորելու, գիտությունները զարգացնելու, գրքեր ստեղծելու, դպրոցներ բացելու և այդպես մայրենի լեզվի հարգը բարձրացնելու նպատակով:

LANGUAGE ISSUES IN "EUROPA" PERIODICAL OF THE MEKHITARISTS OF VIENNA

ASOYAN TATUL
PhD in Philological Sciences, Associate Professor,
Dean of the Faculty of Philology, GSU
e-mail: asoyan.60@mail.ru

The Mekhitarists' activities were also effective in the field of journalism. The first attempt to create a periodical dates back to the beginning of the 19th century. Two periodicals were established, but the great contribution of the Venetians to the history of Armenian journalism is connected with the publication of the journal "Bazmavep". The first attempt of the Mekhitarists of Vienna to publish a newspaper ended in failure, but in 1847, the publication of "Europa" periodical was launched. The purpose of the article is to examine those issues raised in the "Europa" periodical, which are related to language problems. It is noted that in the first period "Europa" referred to such issues, which were not found in the second period.

The materials published in "Europa" refer to various issues. Observations related to the national language are often presented in parallel with the problems of the historically formed state of the Armenians, education, teaching, language and science significance, preservation and development. Grammatical works, new books, old manuscripts, cuneiform inscriptions, Armenian bibliography, etc., are evaluated. In their publications, the Mekhitarists show a balanced position, taking into account the particularity, the nature, and public resonance of the discussed material.

Key words: *"Europa", the Mekhitarists of Vienna, "Bazmavep", language problems, education, teaching, Armenian bibliography.*

ВОПРОСЫ ЯЗЫКА В ВЕНСКОМ ИЗДАНИИ МХИТАРИСТОВ «ЕВРОПА»

АСОЯН ТАТУЛ
Кандидат филологических наук, доцент
Декан филологического факультета ГГУ
электронная почта: asoyan.60@mail.ru

Деятельность Мхитаристов была эффективной и в сфере журналистики.

Первая попытка создания периодики относится к началу 19 века. Выходят в свет два издания, однако большой вклад венецианцев в историю армянской журналистики связан с публикацией журнала «Базмавеп».

Завершается неудачей первая попытка Венских Мхитаристов издать газету, однако с 1847 года начинает издаваться «Европа».

Цель статьи - рассмотрение затронутых в издании «Европа» вопросов, связанных с языковыми проблемами. Отмечается, что «Европа» коснулась таких вопросов в первом периоде, а во втором не встречается такого материала.

Материалы, опубликованные в «Европе», касаются различных вопросов.

Наблюдения, касающиеся национального языка, часто представляются параллельно с проблемами исторически сложившейся судьбы армян,их воспитания и обучения, а также с проблемами сохранения и развития языка.

Оцениваются грамматические труды, книги нового типа, древние рукописи, клинописи, армянская библиография и т.д.

В своих публикациях Мхитаристы демонстрируют благоразумную позицию, учитывая специфику, характер, общественный резонанс обсуждаемого материала.

Ключевые слова: *«Европа», Венские Мхитаристы, «Базмавеп», проблеми языка, обучения, армянская библиография.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 30.09.2022թ.:
Հոդվածը գրախոսվել է 14.10.2022թ.:
Ընդունվել է տպագրության 29.03.2023թ.: